ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 10/2022

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 դեկտեմբերի 2022 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2022 թվականի նոյեմբերի 29-ին «Փաստինֆո» էլեկտրոնային լրատվամիջոցի «ԱՆԻՖ-ը հաստատում է՝ փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը շարունակում է մնալ տնօրենների խորհրդի նախագահ» վերտառությամբ (https://www.pastinfo.am/hy/news/2022/11/29/kdi4tu2sg/1497949) հրապարակումը.

պարզեց

1. **Ըստ հրապարակման տեղեկությունների՝**

1.1 «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը» (այսուհետ՝ Ընկերություն) չի հերքում, որ Տիգրան Ավինյանը շարունակում է մնալ տնօրենների խորհրդի նախագահ,

1.2 Ընկերությունը նշել է, որ դա վճարովի աշխատանք չէ, թեև մինչ հրապարակումը «Փաստինֆո»-ի բանավոր հարցմանն ի պատասխան դժվարացել էին ասել՝ խորհրդի անդամներն աշխատավարձ ստանում են, թե ոչ,

1.3 Երևանի փոխքաղաքապետի պաշտոնում սեպտեմբերի 23-ին նշանակվելուց հետո Ավինյանը շարունակում է զբաղեցնել Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը՝ այդպիսով միևնույն ժամանակ պաշտոնավարելով երկու անհամատեղելի պաշտոններում,

1.4 «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության ներքո գործող ընկերություն է, որի գործունեությունը միտված է խոշորագույն ներդրողների և գործընկերների հետ համատեղ լայնածավալ նախագծերի իրականացմանը,

1.5 Ընկերությունը ստեղծվել է 2019թ՝ կառավարության որոշմամբ, իսկ Տիգրան Ավինյանը հանդիսանում է նշված ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, ինչի մասին փաստում է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ»-ի պաշտոնական կայքէջը,

1.6 Տնօրենների խորհրդի նախագահը օժտված է ղեկավարման գործառույթներով, ինչի մասին ևս փաստում է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ»-ի կայքէջը, որի հրապարակած տեղեկատվության համաձայն՝ հենց տնօրենների խորհուրդն է ղեկավարում ԱՆԻՖ-ը:

2. **Նշված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել հետևյալ փաստական տվյալները**.

2.1 Տիգրան Ավինյանը 2019թ.-ից հանդիսանում է ընկերության տնօրենների խորհրդի նախագահ:

2.2 «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն (ԱՆԻՖ) ՀՀ կառավարության ներքո գործող ընկերություն է, որի գործունեությունը միտված է խոշորագույն ներդրողների և գործընկերների հետ համատեղ լայնածավալ նախագծերի իրականացմանը: Ընկերության նպատակն է լինել ակտիվ ներդրող և գործընկեր՝ խթանելով ներդրումները Հայաստանի տնտեսության կարևորագույն ոլորտներում: Ընկերությունը շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է:,

2.3 Ընկերությունը հիմնադրվել է Կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի 513-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում): Որոշման 3-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ

է ոլորտը համակարգող փոխվարչապետի համաձայնությունը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «ե»-«է» կետերով) սահմանված լիազորությունների իրականացման համար:

2.4 Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերության կառավարման մարմիններն են՝ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, ընկերության տնօրենների խորհուրդը, ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրեն,

2.5 Տիգրան Ավինյանը 2022թ. սեպտեմբերի 23-ին Երևանի ավագանու որոշմամբ նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:

2.6 Տիգրան Ավինյանի՝ 2022թ. պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրում ներկայացվածություն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նշել է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն (ԱՆԻՖ):

«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ պետական և **համայնքային**: Նույն հոդվածի համաձայն՝ Համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ **քաղաքական**, վարչական և հայեցողական:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Համայնքային քաղաքական պաշտոններն** են համայնքների ղեկավարների և **նրանց տեղակալների**, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները **չեն կարող** զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում**, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, **կատարել վճարովի այլ աշխատանք**, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ**

ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ **առևտրային կազմակերպությունում** (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) **պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝**

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, Կառավարության անդամի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի) կամ հանրային ծառայողը կարող է ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, **զբաղեցնել այլ պաշտոն** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ **առևտրային կազմակերպություններում**, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Վերոգրյալից հետևում է, որ Տիգրան Ավինյանը 2022 թվականի սեպտեմբերի 23-ին համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելուց հետո մեկամսյա ժամկետում պարտավոր էր ապահովել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցել վարույթ:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ